



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

07.02.2020թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/05**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցում, ախտահանիչ
նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից
24.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում, որը կարգելի թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով ընտրված մասնակիցներ ճանաչվածների հետ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.01.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ ու հրապարակվել www.gnumner.am կայքում:

03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ և նույն օրը Բողոքի քննությունն ավարտվել է:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.02.2020թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն «Ախտահանիչ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի հրավերի թվով 16 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր (կից փաստաթուղթ թիվ 2) :

28.10.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել ՀՀ Գնումների հետ կապված բողոքները քննող անձին՝ բողոքարկելով Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինները, խնդրելով ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-8/» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝

1-3), որոնց <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<Կրեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակներում առկա որոշ պահանջները չհիմնավորված խոչընդոտներ են առաջացրել <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովել և սահմանափակել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով հայտարարված մրցույթին (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ի բողոքը վարույթ է ընդունվել բողոքը քննող անձի կողմից, և հաստատված ժամանակացույցի համաձայն՝ ներկայացված <<ԳԲՔԱ-ԼՕ-2019/77>> բողոքի քննության վերաբերյալ առաջին նիստը նշանակվել էր 2019թ. նոյեմբերի 1-ին, ժամը 15:00-ին (կից փաստաթուղթ թիվ 5), իսկ հաջորդ նիստը նշանակվել էր 2019թ. նոյեմբերի 14-ին, ժամը 16:00-ին (կից փաստաթուղթ թիվ 6), որի պատճառով էլ <<Խաչպար>> ՍՊԸ-ն հայտ չէր ներկայացրել <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման մրցույթի Հրավերի այդ չափաբաժինների մասերով մասնակցելու համար, քանի որ մրցույթի հնարավոր մասնակիցների համար հայտերը էլեկտրոնային ձևով ներկայացնելու վերջնաժամկետը սահմանված է եղել 2019թ. նոյեմբերի 6-ը, ժամը 11:00-ը, երբ որ նաև կայանալու էր հայտերի էլեկտրոնային ձևով բացումը՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով (կից փաստաթուղթ թիվ 1, արված նշումները):

21.11.2019թ. <<Խաչպար>> ՍՊԸ-ի բողոքը մերժվել է <<ԳԲՔԱ-ԼՕ-2019-77>> որոշումով:

26.11.2019թ. <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստ է հրավիրել, որի թիվ 5 արձանագրության <<Ծանոթություն>> բաժնում փաստել է, որ ընթացակարգի հայտերի բացման օրը նշանակված է եղել 06.11.2019թ. ժամը 11:30-ին, սակայն չի կայացել <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ընթացակարգը բողոքարկելու պատճառով (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-5, 1-ին էջում արված նշումները):

28.11.2019թ. <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակել է նիստը և արձանագրել, որ մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել թվով 7 մասնակիցներ (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 1, կետ 1.1), հրապարակել է մասնակիցների առաջարկած գները՝ ըստ 16 չափաբաժինների (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 2, կետ 3.1) և որոշել է 05.12.2016թ. գների նվազեցման բանակցություններ վարել մասնակիցների հետ (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 3, կետ 3.3):

05.12.2019թ. <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն գների նվազեցման բանակցությունների ժամանակ չի նվազեցրել իր առաջարկած գները Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 3, կետ 3.3, արված նշումը), իսկ թիվ 10-րդ չափաբաժնի մասով <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկված 1 հաբի արժեքը՝ 66.5 դրամի փոխարեն (ընդհանուր գումարը՝ 9975000 դրամ) <<ԱԻԴԱ ԹԻԵՅԴ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց ընդամենը 10 լումայով էժան գին՝ 66.4 դրամ (ընդհանուր գումարը՝ 9960000 դրամ):

10.12.2019թ. <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակել է 26.11.2019թ. սկսված նիստը և 06.11.2019թ. էլեկտրոնային գնահատման արդյունքներից ելնելով, որոշում է կայացրել ընթացակարգի չափաբաժինների մասերով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 3, կետ 4.1) և արձանագրությանը կից Հավելված թիվ 1-ով գրանցել է արդյունքները (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 4, Հավելված 1):

2020թ. հունվարի 21-ին, ժամը 16:09:40-ին և ժամը 16:09:43 -ին (կից փաստաթուղթ թիվ 8): Պարվիրատուի կողմից <<gnumner.am>> կայքում հրապարակվել է <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 8 արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը (կից փաստաթուղթ թիվ 9, էջեր՝ 1-4):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պարվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. հունվարի 21-ին <<gnumner.am>> կայքում հրապարակված թիվ 8-րդ նիստի թիվ 1.2 կետով կայացրած որոշումը՝ Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով ընտրված մասնակից ճանաչելու և նրանց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

ընդունելու որոշում, որը կարգելի ՀՀ ՊՆ-ի <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքելու <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով ընտրված մասնակիցներ ճանաչվածների հետ:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

ա) Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանումների՝ արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի կազմակերպումը և իրականացումը Հրավերի թիվ 10-րդ չափաբաժինների մասով չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջին, քանի որ ինչպես թիվ 10-րդ, այնպես էլ թիվ 2-րդ չափաբաժիններով պահանջվող գնման առարկաները փաստացի հանդիսանում են միևնույն գնման առարկան՝ միևնույն են նրանց ազդող նյութերը, կիրառման ոլորտներն ու նպատակները (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները), նրանց 1 հաբը 10 լիտր ջրում լուծելուց ստացվող աշխարանքային լուծույթի կոնցենտրացիաները:

Փաստացի միևնույն գնման առարկաներին առանձին չափաբաժինների բաժանելը հանգեցրել է մրցակցային ձևից խուսափելուն, ինչն ակնհայտորեն երևում է առաջարկված գների համեմատությունից՝ թիվ 2-րդ չափաբաժնով 1 հաբի համար հաղթող ճանաչված նվազագույն գին է առաջարկվել 5,8 դրամ գինը, իսկ թիվ 10-րդ չափաբաժնով 1 հաբի համար հաղթող ճանաչված նվազագույն գին է առաջարկվել 66.4 դրամ գինը (կից փաստաթուղթ թիվ 9, էջ՝ 4, արված նշումները), այսինքն՝ միևնույն գնման առարկա հանդիսացող հաբը ձեռք է բերվել 11,44 անգամ ավելի թանկ գնով:

բ) Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանումների՝ Օրենքի նպատակներից է Պատվիրատուների կարիքներին համապատասխան ապրանքների ձեռքբերման գնումների գործընթացների տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, որի համար գնումների գործընթացները պետք է կազմակերպվեն մրցակցային կանոններով, ինչը կնպաստի պայմանագրի կնքման նպատակով մրցույթների հնարավոր մասնակիցների շրջանակների ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը:

ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի կազմակերպումը և իրականացումը Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջներին, որոնց ապացուցման համար՝ որպես լրացուցիչ փաստարկ, Ձեզ եմ ներկայացնում այս

մրցույթի Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով փոխալների համեմատությունները նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով ՀՀ ՊՆ-ի կողմից 2016թ. մինչ օրս իրականացրած նմանատիպ մրցույթների փոխալների հետ (կից փաստաթուղթ թիվ 10, էջեր՝ 1-2), որոնք աներկբա կերպով ապացուցում են, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով մրցույթը կազմակերպվել է ոչ մրցակցային սկզբունքներով, «հաղթել» է «մշտապես պատահաբար հաղթող» միևնույն ապրանքը, համարյա միևնույն գներով, որի պատճառով էլ մրցույթի արդյունքները փնտրելով, արդյունավետ և օգտավետ չեն իրականացվել ոչ ՀՀ ՊՆ-ի և ոչ էլ ՀՀ Պետրոլիումի համար:»:

Ելնելով վերոգրյալներից, «Խաչապար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում, որը կարգելի թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով ընտրված մասնակիցներ ճանաչվածների հետ:

Ներկայացված լրացումներով Ընկերությունը հայտնել է, որ.

««Խաչապար» ՍՊԸ-ն օգտվելով բողոքի քննարկման ընթացքում օրենսդիր կողմից բողոքաբերին ընձեռված՝ բողոքի փաստացի, և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու/ավելացնելու հնարավորությունից, Ձեր վերջնական քննությանն ու վճռահարմանն է ներկայացնում հետևյալը՝

ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Վերոգրյալ իրավակարգավորումից ենթադրվում է, որ հայտերի ներկայացման ժամկետը պետք է կասեցվի մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը: Այնինչ փոխալ պարագայում հայտերն ինքնաբերաբար բացվել են և հասանելի են դարձել երրորդ անձանց, իսկ մեր կազմակերպությունը հայտերի բացման նախնական ժամկետից հետո այլևս հնարավորություն չի ունեցել մասնակցության հայտ ներկայացնելու: Վերոգրյալը խախտել է մեր իրավունքը մասնակցելու փոխալ

ընթացակարգին՝ Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով:»:

«Ի լրումն բողոքի և ի հաստատումն բողոքով ներկայացված եզրակացությունների, հիմնավորումների և պահանջների, Ձեզ ենք ներկայացնում Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով հաղթող ճանաչված՝ «Պրեսեպո», «Սայդեքս», «Սայդես ՕՊԱ», «Սայդեգիմ էքստրա» «Օկրենիդերմ/Օկրենիման» ֆիրմային անվանումներով, ապրանքների վերաբերյալ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից նախորդ փարիների մրցույթների բողոքարկումներին առնչվող փարբեր իրավասու մարմինների կողմից փրված գնահատականներն ու կատարված եզրահանգումները պարունակող գրություններ, ինչպես նաև այդ գրություններում նշված չափաբաժիններին համապատասխանող ֆիրմային անվանումներով ապրանքների անվանումները հավաստող փաստաթղթեր և համեմատական աղյուսակներ:

1) Համաձայն ՀՀ ԱՆ 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 գրության եզրակացությունների, ախտահանիչ միջոցների համարժեքության համար կողմնորոշիչ չափանիշները թվով 5-ն են, որոնց փվյալների հիման վրա «Դիմաքս քլոր հաբեր»-ը 3-ով նույնն են, ինչ «Պրեսեպո հաբեր»-ը, իսկ 2-ով գերազանցում են «Պրեսեպո հաբեր»-ին (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-3, արված նշումները):

Այդ նույն գրության համաձայն՝ «Սպերոքս»-ի թվով 3 կողմնորոշիչ չափանիշները նույնն են, ինչ «Սայդեքս ՕՊԱ»-ինը, իսկ 2-ը գերազանցում են նրա փվյալներին (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 4-5):

1) Համաձայն ՀՀ ԱՆ 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 գրության եզրակացությունների, ախտահանիչ միջոցների համարժեքության համար կողմնորոշիչ չափանիշները թվով 5-ն են, որոնց փվյալների հիման վրա «Դիմաքս քլոր հաբեր»-ը 3-ով նույնն են, ինչ «Պրեսեպո հաբեր»-ը, իսկ 2-ով գերազանցում են «Պրեսեպո հաբեր»-ին (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-3, արված նշումները):

Այդ նույն գրության համաձայն՝ «Սպերոքս»-ի թվով 3 կողմնորոշիչ չափանիշները նույնն են, ինչ «Սայդեքս ՕՊԱ»-ինը, իսկ 2-ը գերազանցում են նրա փվյալներին (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 4-5):

2) Համաձայն ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգների, «Պրեսեպո 5,0 գ հաբեր»-ի 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,44 – 1, 76 գ ակտիվ քլոր, 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս ստացվում է 0.014 %-անոց աշխատանքային լուծույթ, որը կիրառվում է «...բժշկական նշանակության իրերի...ախտահանման համար...»(կից փաստաթուղթ

թիվ 2, էջեր՝ 1-2, արված նշումները), «Հիմաքս քլոր 2,7 գ հաբեր»-ի 1 հաբի լուծման ժամանակ անջարվում է 1,5 գ ակտիվ քլոր, 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս սրացվում է 0.015 %-անոց աշխարանքային լուծույթ, որը կիրառվում է «... չժանգոտվող մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակե բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման համար...» (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-3, արված նշումները), «Ադամանդե Միգ 3,4 գ հաբեր»-ի 1 հաբի լուծման ժամանակ անջարվող ակտիվ քլորի քանակը կազմում է հաբի քաշի «... 45,0±5,0%...»-ը, 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս սրացվում է 0.015 %-անոց աշխարանքային լուծույթ, որը կիրառվում է «... բժշկական նշանակության գործիքների՝ վիրաբուժական, մետաղյա, ռետինե, պլաստմասսե արամնաբուժական գործիքների, էնդոսկոպերի և այլ ընթացիկ և եզրափակիչ ախտահանման համար...» (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-2, արված նշումները):

Բերված փաստաթղթերը ապացուցում են, որ վերոգրյալ բոլոր ախտահանիչ միջոցներն էլ պարունակում են միևնույն ազդող նյութը, բոլորը հանդիսանում են դյուրալուծ հաբեր, որոնց բոլորի՝ անկախ իրենց հաբերի կշռից և լուծման ժամանակ անջարվող ակտիվ քլորի քանակից, 1 հաբերը 10 լիտր ջրում լուծելիս սրացվում է փաստորեն միևնույն՝ 0.014-0.015 %-անոց աշխարանքային կոնցենտրացիոն ունեցող, աշխարանքային լուծույթները, որոնք բոլորն էլ ունեն միևնույն մանրէասպան հատկությունները և կիրառվում են միևնույն նպատակներով: Դա նշանակում է, որ Պատվիրատուի պնդումները, թե Հրավերի թիվ 2-րդ և 10-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները փարբեր ապրանքներ են, չի համապատասխանում իրականությանը, հակասում է ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջին:

3) Համաձայն Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի 22.09.2017թ. թիվ 23-118 գրության եզրակացությունների (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ և 4-5, արված նշումները), ՀՀ ՊՆ-ի կողմից

«ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-9/10» ծածկագրով մրցույթի թիվ 6-րդ չափաբաժնի մասով պահանջվող՝ «Պրեսեպր 2,5գ N 100 կամ համարժեք» անվանումով գրված ապրանքի «տեխնիկական հատկանիշներ» սյունակում առկա՝ «...», 1 հաբի լուծման ժամանակ անջարվում է 1,76գ ակտիվ քլոր...» պահանջը (կից փաստաթուղթ թիվ 6, արված նշումները) կազմված է «Պրեսեպր հաբեր»-ի հրահանգին ոչ համապատասխան՝ «...5,0 գ կշռով հաբը լուծելիս արտադրվող ակտիվ քլորի ծավալով (նշված է 1,76 գ ակտիվ քլոր 1,44-1,76 գրամի փոխարեն)...» , ինչը սահմանափակել է

<<Պրեսեսպր հարեր>>-ին համարժեք ապրանքներ առաջարկող պոլիտեխնիկ մատակարարների մուտքի թույլտվությունը տվյալ չափաբաժնի մասով մրցույթին:

4) Համաձայն ՀՀ ՏՄՊՊՀ Նախագահի 15.11.2017թ. թիվ ԱՇ-1800 գրության եզրակացությունների, ՀՀ ՊՆ-ի 2017թ. մարտի 6-ին հայտարարված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9>> ծածկագրով մրցույթի թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժիններով պահանջվող (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-2, արված նշումները) ախտահանիչ նյութերի (դրանց մի մասը առկա են բողոքարկվող չափաբաժիններում՝ կից փ/թ թիվ 8, արված նշումները)տեխնիկական բնութագրերում <<... սահմանվել են այնպիսի ցուցանիշներ և նույնականացնող այլ տվյալներ, որի պարագայում մրցույթի բոլոր մասնակիցների համար չեն ապահովվել հավասար մրցակցային հնարավորություններ:....>> , և պահանջել են ՀՀ ՊՆ-ից, որպեսզի <<...Նախարարության կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվող մրցույթների անցկացման ընթացքում հնարավոր մասնակիցների շրջանակը չսահմանափակելու և վերջիններիս միջև հավասար մրցակցություն ապահովելու նպատակով մրցույթների անցկացման ծամանակ ապրանքների տեխնիկական բնութագրերը անհրաժեշտ է կազմել այնպես, որ դրանք չպարունակեն որևէ արտադրողի կոնկրետ բրենդը նույնականացնող տվյալներ և այլ ցուցանիշներ: ...>> (կից փաստաթուղթ թիվ 9, էջեր՝ 1-2, արված նշումները):»:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 24.01.2020թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/925-2020 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

««Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի վերաբերյալ 24.01.2020թ. ներկայացված բողոքի առնչությամբ (ԳԲԲԱ-ԼՕ-2020/05)

տեղեկացնում եմ, որ ներկայացված բողոքը՝ «ընդունելու որոշում, որը կարգելի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցներ ճանաչվածների հետ» անհիմն է հետևյալ հիմքերով.

1. բողոքի փաստացի և իրավական հիմքերում առկա չէ ոչ մի հիմնավորում, որը վերաբերվում է ընթացակարգի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժիններին,

2. բողոքի փաստացի և իրավական հիմքերում ընթացակարգի 10-րդ չափաբաժնի վերաբերյալ ներկայացված այն հիմնավորումը, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, այն է՝ «արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով», չի համապատասխանում իրականությանը, քանի որ.

ա) ընթացակարգի 2-րդ և 10-րդ չափաբաժիններով գնման առարկաներ հանդիսացող ախտահանիչ նյութերը ունեն փարբեր տեխնիկական բնութագրեր և դրանք միևնույն գնման առարկան չեն: Ընթացակարգի 10-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող ախտահանիչ նյութի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի վերաբերյալ 28.10.2019թ-ին «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել էր բողոք, որը մերժվել էր 21.11.2019թ. «ԳԲՔԱ-ԼՕ-2019/77» որոշումով:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված արգելքը չի կարող վերաբերվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով ընթացակարգի որևէ չափաբաժնին, քանի որ ընթացակարգը իրականացվում է «գնանշման հարցում» մրցակցային գնման ձևով,

3. բողոքի փաստացի և իրավական հիմքերում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված այն պնդումը, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի կազմակերպումը և իրականացումը հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջներին», չի համապատասխանում իրականությանը:

Նշված ընթացակարգը կազմակերպվել և իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» պահանջներին համապատասխան: Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը գործել է համաձայն իրավական ակտերի պահանջների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքը մերժել:»:

Պատվիրատուն՝ Ընկերության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ լրացումներին ներկայացրել է հետևյալ դիրքորոշումները.

«ԳԲԲԱ-ԼՕ-2020/05 ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ի լրումն ներկայացված նյութերի առնչությամբ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը շարունակում է մնալ այն կարծիքին, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է: Տվյալ ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերն են՝

1. «Խաչպար» ՍՊ ընկերությունը տվյալ ընթացակարգի վերաբերյալ 28.10.2019թ-ին (մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը) ներկայացված իր առաջին բողոքում նշել էր, որ հրավերով թիվ 10, 11, 12, 13 և 15-րդ չափաբաժինների համար սահմանված տեխնիկական բնութագրերի պատճառով չի կարողացել ներկայացնել մասնակցության հայտ և խնդրել էր ընդունել որոշում որը կպարտավորեցնի փոփոխել նշված չափաբաժիններով պահանջված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը: Բողոքը մերժվել էր ամբողջությամբ և բնութագրերը մնացել են անփոփոխ:

2. «Խաչպար» ՍՊ ընկերությունը տվյալ ընթացակարգի վերաբերյալ 19.12.2019թ-ին (հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո) ներկայացված իր 2-րդ բողոքում կրկին խնդրել էր ընդունել նույնպիսի որոշում: 2-րդ բողոքը նույնպես մերժվել է ամբողջությամբ:

3. Ներկայումս «Խաչպար» ՍՊ ընկերության տնօրենը պնդում է, որ անփոփոխ մնացած տեխնիկական բնութագրերի պարագայում հնարավորություն չի ունեցել մասնակցության հայտ ներկայացնել հայտերի բացման ժամկետը չկասեցվելու պատճառով:

4. «Խաչպար» ՍՊ ընկերության մասնակցության իրավունքը չի խախտվել, քանի որ, ընկերությունը ինքն է որոշում՝ ի սկզբանե անփոփոխ մնացած տեխնիկական բնութագրերով, մասնակցության հայտ ներկայացնի թե բողոքարկի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը 10, 11, 12, 13 և 15-րդ չափաբաժինների մասով: (Եթե իհարկե ընկերությունը ուներ տեխնիկական բնութագրերին համապատասխան ախտահանիչներ):

5. «Խաչպար» ՍՊ ընկերության տնօրենը ՊՆ-ի կողմից ախտահանիչ նյութերի ձեռքբերման ընթացակարգերի վերաբերյալ ներկայացված բողոքների քննության նիստերից մեկի ժամանակ հայտարարել է, որ ունի 3 անգամ բողոքելու իրավունք և որ իրացնելու է այդ իրավունքը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Արձանագրված փաստերի լույսի ներքո կարելի է եզրակացնել, որ «Խաչպար» ՍՊ ընկերությունը օգտվելով օրենքով վերապահված բողոքարկման իրավունքից անում է հնարավոր ամեն ինչ, որպեսզի խոչընդոտի ՊՆ-ի կողմից կենսական կարևոր նշանակություն ունեցող ախտահանիչ նյութերի ձեռքբերման գործընթացները, դրանով իսկ խաթարելով բուժօգնության տրամադրումը զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին:

«Խաչպար» ՍՊ ընկերության նման գործելավորը մեր կողմից որակվում է ոչ այլ ինչ քան «իրավունքի չարաշահում», ինչն արգելվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով:»:

«ԳԲՔԱ-ԼՕ-2020/05 ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից կրկնակի ի լրումն ներկայացված նյութերի առնչությամբ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը շարունակում է մնալ այն կարծիքին, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է: Որպես հիմնավորում ներկայացված «պատմական ակնարկում» պարունակվող տեղեկատվությունը չի վերաբերում ԳԲՔԱ-ԼՕ-2020/05 ընթացակարգին, քանի որ.

1. ՀՀ ԱՆ 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 գրությունում ներկայացված է եզրակացություն կոնկրետ ընկերությունների կողմից արտադրված կոնկրետ ապրանքատեսակների ընդամենը 5 չափորոշիչներով համեմատության վերաբերյալ: Տվյալ գրությունը որևիցե առնչություն չունի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին: Նշված ընթացակարգի տեխնիկական բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը (հիմք՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2 մասի 3րդ կետի պահանջներ):

2. Բժշկական նշանակության իրերի, պարագաների, սարքերի և այլն. ախտահանման համար կիրառվող բոլոր տեսակի ախտահանիչների օգտագործման հրահանգներում նշված է «... բժշկական նշանակության իրերի ... ախտահանման համար...» արտահայտությունը, անկախ այն փաստից թե այդ ախտահանիչները ինչ ազդող

նյութ ունեն, ինչ հավելումներ, ինչ հատկանիշներ, ինչ կոնցենտրացիայով են կիրառվում, ինչ տեսքով են արտադրվում (հեղուկ, փոշի, գրանուլա կամ հաբ): Սակայն դա չի նշանակում որ դրանք միևնույն գնման առարկան կարող են հանդիսանալ:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի 2-րդ և 10-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակների համար հրավերով սահմանված են տարբեր տեխնիկական բնութագրեր և դրանք միևնույն գնման առարկան չեն, բացի այդ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված արգելքը, որն է՝ «արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով», չի կարող վերաբերվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով ընթացակարգի որևէ չափաբաժին, քանի որ ընթացակարգը իրականացվում է «գնանշման հարցում» մրցակցային գնման ձևով:

3. Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի 22.09.2017թ. թիվ 23-118 գրությունը վերաբերվում էր 2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» գնման ընթացակարգին և նրանում առկա որոշ չափաբաժինների տեխնիկական բնութագրերին: Նշված գրությունը որևիցե առնչություն չի կարող ունենալ 2019թ-ին կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 ընթացակարգին: Ներկայումս բողոքարկված ընթացակարգի 10-րդ չափաբաժնի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում են ոչ միայն «Պրեստեպ» անվանումով ախտահանիչ հաբերը, այլ նաև մի քանի այլ ընկերությունների կողմից արտադրվող ախտահանիչներ: Նշված չափաբաժնի տեխնիկական բնութագիրը մինչև հայտերի բացման վերջնաժամկետի ավարտը արդեն իսկ բողոքարկվել էր «Խաչպար» ՍՊ ընկերությունը կողմից և քննության արդյունքում բողոքը մերժվել էր:

4. ՀՀ ՏՄՊՊՀ նախագահի 15.11.2017թ. թիվ ԱՇ-1800 գրությունը վերաբերվում էր պաշտպանության նախարարության կողմից 2017թ. մարտի 6-ին հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9 ծածկագրով ընթացակարգի որոշ չափաբաժինների տեխնիկական բնութագրերին: ԳԲՔԱ-ԼՕ-2020/05 ընթացակարգի քննության առարկա հանդիսացող ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնանշման հարցման ընթացակարգի չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմված են այնպես, որ դրանք չեն պարունակում որևէ արտադրողի կոնկրետ բրենդը նույնականացնող տվյալներ և այլ ցուցանիշներ, դրանց համապատասխանում են մի քանի արտադրողի արտադրանք, ինչն արդեն իսկ մեր կողմից ապացուցվել է «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից առաջին բողոքի քննության ժամանակ:

Ելնելով վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ «Խաչպար» ՍՊ ընկերությունը ԳԲՔԱ-ԼՕ-2020/05 ընթացակարգի շրջանակներում Ձեր քննությանը ներկայացնելով

քննության առարկայի հետ չառընչվող՝ նախկին տարիներին մեր կողմից հրապարակված գնման ընթացակերպերի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկատվություն, փորցում է ծանրաբեռնել քննությունը՝ հավատարիմ մնալով իր կողմից որդեգրած՝ ՊՆ-ի կողմից ախտահանիչ նյութերի ձեռքբերումը խոչընդոտելու քաղաքականությանը:

«Խաչպար» ՍՊ ընկերության նման գործելավորճը մեր կողմից որակվում է ոչ այլ ինչ քան «իրավունքի չարաշահում», ինչն արգելվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով:»:

4. ԳԲՔԱ-ԼՕ-2020/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով 24.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.11.2019թ.-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ.-ին ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/77 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.11.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն (10-րդ չափաբաժնի մասով) և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն (11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով) ճանաչվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/92 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2020թ. թիվ 7 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «Աիդա Թրեյդ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել էին 18.12.2019թ. ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշել է «Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «Աիդա Թրեյդ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել բավարար:

21.01.2020թ.-ին www.armeps.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 7 մասնակից՝ 10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, իսկ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ.-ի ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլինե՞ր ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլինե՞ր տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«ՎՎ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով 24.10.2019թ.-ին հայտարարվել է «ՎՎ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.11.2019թ.-ին:

«Խսաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՎՎ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/77 որոշմամբ «Խսաչպար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.11.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն (10-րդ չափաբաժնի մասով) և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն (11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով) ճանաչվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ:

«Խաչապար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/92 որոշմամբ «Խաչապար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2020թ. թիվ 7 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «Աիդա Թրեյդ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել էին 18.12.2019թ.-ի ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշել է «Հրաշք այգի», «Ինտերմեդ Գրուպ», «Աիդա Թրեյդ», «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել բավարար:

21.01.2020թ.-ին www.armeps.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 7 մասնակից՝ 10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, իսկ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և

դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել Պատվիրատուի կողմից Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստի վերաբերյալ վերաբերելի ապացույց: Այն, որ Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը համարժեք հատուցմամբ չէ և որ Պատվիրատուի կողմից խախտվել են գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքները: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Ընթացակարգը հայտարարված է եղել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որն էլ ուղղակիորեն սահմանում է, որ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը Օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Ընդ որում՝ կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Ընկերության կողմից Բողոքի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացրած 2016թ.-ին կազմակերպված թիվ «ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10», 2017թ.-ին կազմակերպված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9», 2017թ.-ին կազմակերպված թիվ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» և այլ ընթացակարգերին «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի մասնակցելու և հաղթող մասնակից ճանաչվելու հանգամանքը չի կարող սույն գործով էական նշանակություն ունեցող փաստ հանդիսանալ, քանի որ այդ հանգամանքը չի ապացուցում սույն ընթացակարգի Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը համարժեք հատուցմամբ և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքների Պատվիրատուի կողմից խախտված լինելու հանգամանքը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Միայն մեկ մասնակից կամ նախկինում կազմակերպված ընթացակարգերում հաղթող ճանաչված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սույն ընթացակարգի Օրենքի 3-րդ հոդվածի դրույթների խախտմամբ կազմակերպված լինելու համար: Ինչպես և վերը նշվել է սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Այլ կերպ ասած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքներն իրենց արտացոլումն են ստացել արդեն նույն օրենքի հատուկ դրույթներում, որպիսի խախտումներ Բողոքներ քննող անձի կողմից չարձանագրվեցին, որպիսիք էլ իրենց հերթին կհանգեցնեին Օրենքի՝ Բողոքաբերի կողմից վկայակոչված 3-րդ հոդվածի (սկզբունքների) խախտմանը:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ նմանօրինակ տեխնիկական բնութագիրն է սահմանափակել հնարավոր մասնակիցների մասնակցություն ու մրցակցությունը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ տեխնիկական բնութագրի իրավաչափության հարցը քննության առարկա է դարձել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/77 Բողոքի քննության արդյունքում, որի վերաբերյալ 21.11.2019թ. կայացվել է որոշում, «Խաչապար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է այն հիմնավորմամբ,

որ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Նման պայմաններում կրկին անգաման անդրադառնալ իրավապարտադիր ուժ ունեցող որոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը գտնում է անթույլատրելի, հատկապես որ այն կարող է փոփոխվել կամ վերացվել միայն դատարանի կողմից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/05 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

